ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/26

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ «Օլանդա» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝

Ա. Պարանյանի/լիազորագիր տրված՝ 20.05.2019թ./

Քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2019/8 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Օլանդա» ՍՊԸ-ի կողմից 16.05.2019թ. ներկայացված և 17.05.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/26 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Օլանդա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Օլանդա» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 16.05.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը՝

«ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար «Գրասենյակային կահույքի» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2019/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2019թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ-ն ճանաչել որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 3-րդ, 4-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժինների մասով:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին և սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով հարցում կատարել ՀՀ ՊԵԿ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողների հաշվառման համարները:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.05.2019թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ-ի հայտը մերժել, քանի որ Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարարգրերը ուղարկվել է սահմանված ժամկետից ուշ, այն է՝ 10.05.2019թ. :

Ընկերությունը վկայակոչել է բողոքի հետևյալ իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Ընկերությունը հայտնել է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2019թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ-ն ճանաչել որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 3-րդ, 4-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժինների մասով, ինչպես նաև նույն արձանագրության համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին և սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով հարցում կատարել ՀՀ ՊԵԿ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Սակայն «ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ-ին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից որևէ ծանուցում չի ուղարկվել հայտով ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերը ուղարկելու վերաբերյալ:

Ավելին, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2019թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությունից անգամ անհայտ է մնում, թե հանձնաժողովը ինչի վերաբերյալ է ծանուցում 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4 ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք

աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին, մինչդեռ գնահատող հանձնաժողովի կամ հանձնաժողովի քարտուղարի կողմից որևէ ծանուցում չի ստացվել:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է նկատի ունենալ, որ «ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ-ն այդպես էլ չստանալով որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու պահանջը /Ծանուցում/, այլ փոխարենը ստանալով միայն 02.05.2019թ.-ի արձանագրությունը՝ 10.05.2019թ. սեփական նախաձեռնությամբ էլեկտրոնային տարբերակով ներկայացրել է փաստաթղթերը, որը փաստվել է նաև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.05.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ:

Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անհասկանալի և անհիմն գործողությունների հետևանքով խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետով սահմանված պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքը, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված մասնակցի մասնակցության իրավունքի իրականացման սահմանափակմանը կամ ոչ լիարժեք իրականացմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման…:

Ներկայացված բողոքով Ընկերությունը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել ՀՀ պետական եկամուտների կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2019/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 13.05.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացրած «ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին որոշումը:

Ի լրումն բողոքի Ընկերությունը 11.06.2019թ. գրությամբ հայտնել է, որ ուսումնասիրելով ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը և կցված փաստաթղթերը, որը Ընկերությանը ներկայացվել է 10.06.2019թ., հայտնում է հետևյալ նկատառումները՝

1. ՀՀ ՊԵԿ-ը իր կողմից ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է, որ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպված ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2018/8 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 02.05.2019թ-ի թիվ 2 նիստով որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ին 1-ին և 2-րդ չափաբաժինների, «ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ-ին 3-րդ, 4-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժինների, «Դամկար» ՍՊԸ-ին 5-րդ չափաբաժնի և «Ֆոտոն» ՍՊԸ-ին 7-րդ չափաբաժնի մասով: 03.05.2019թ-ին հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային գնումների armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով նշված նիստի արձանագրությունը ծանուցվել է առաջին տեղ զբաղեցրած բոլոր մասնակիցներին: Ծանուցված չորս մասնակիցներից երեքը օրենսդրությամբ սահմանված ժամկետում ներկայացրել են իրենց կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ բացի «ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ-ից, որն այն ներկայացրել է ժամկետից ուշ՝ 10.05.2019թ-ին, ուստի այն գնահատող հանձնաժողովի կողմից չի ուսումնասիրվել և 13.05.2019թ-ի թիվ 3 նիստով «ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Վերոնշվածի հետ կապված Ընկերությունը հայտնել է, որ այն հանգամանքը, որ 03.05.2019թ. թիվ 2 արձանագրությունը գնահատող հանձնաժողովի կողմից ուղարկվել է Ընկերության էլ. հասցեին Ընկերության կողմից ներկայացված բողոքով չի վիճարկվում, քանի որ թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/26 բողոքի շրջանակներում Ընկերությունը ևս հայտնել է, որ 03.05.2019թ. գնահատող հանձնաժողովի կողմից ստացվել է միայն թիվ 2 արձանագրությունը;

Ընկերությունը նշել է, որ ամբողջ բողոքի էությունը կայանում է նրանում, որ գնահատող հանձնաժողովի կողմից այդպես էլ չի ստացվել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու մասին ծանուցումը՝ ինչը պահանջվում է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4 ենթակետով, որի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին, մինչդեռ գնահատող հանձնաժողովի կամ հանձնաժողովի քարտուղարի կողմից որևէ ծանուցում չի ստացվել:

Ընկերությունը նշել է, որ ինչպես երևում է ՀՀ ՊԵԿ-ի գրությունից՝ գնահատող հանձնաժողովը չի տարբերակում արձանագրությունը և Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով

նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու մասին ծանուցումը, որը, մեղմ ասած, գնումների մասին ՀՀ օրենսդրության չտիրապետելու արդյունք է:

Ընկերությունը նշել է նաև, որ անգամ ուղարկված արձանագրության ուսումնասիրությունից է պարզ դառնում, որ այն ընդամենը գնահատող հանձնաժողովի նիստի և վերջինիս կողմից ընդունած որոշման արձանագրման փաստաթուղթ է, ինչը հիմք ընդունելով՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը պետք է կատարեր համապատասխան գործողություններ, այն է՝ համապատասխան ծանուցում ուղարկեր առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև նշված ծանուցման մեջ պետք է նշեր նաև փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը:

Ընկերությունը հայտնել է, որ ամփոփելով 1-ին կետով բերված նկատառումները՝ կից ներկայացնում է նաև տարբեր պատվիրատուների կողմից ներկայացվող ծանուցումների մի քանի օրինակներ:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է ուշադրություն դարձնել նաև մեկ այլ կարևոր հանգամանքի վրա, որ ՀՀ ՊԵԿ-ը իր կողմից ներկայացված գրությամբ նույնպես ընդունում է, որ 03.05.2019թ. ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ուղարկել է միայն արձանագրություն թիվ 2-ը՝ /03.05.2019թ-ին հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային գնումների armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով նշված նիստի արձանագրությունը ծանուցվել է առաջին տեղ զբաղեցրած բոլոր մասնակիցներին/ և որևէ ծանուցման մասին անգամ խոսք չի գնում և առկա չէ որևէ արտատպում, որ կփաստի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերությանը ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու մասին:

Ընկերությունը հայտնել է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի կողմից արդենիսկ քննվել է նույն փաստական հանգամանքներով բողոք /թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/14/, որի վերաբերյալ 17.05.2019թ. կայացվել է որոշում և Արտավազդ Սարոյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված բողոքը բավարարվել է հետևյալ հիմնավորմամբ.

«Բողոքներ քննող անձը արձանագրում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից Արտավազդ Սարոյան Ա/Ձ-ին էլեկտրոնային փոստի միջոցով չի ուղարկվել որևէ ծանուցում՝ ներկայացնելու որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, այլ միայն ուղարկվել է արձանագրության պատճեն: Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Կարգի 43-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ պարտավոր էր հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակեր տեղեկագրում, ինչպես նաև պարտավոր էր էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցեր առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Սակայն գնահատող հանձնաժոովի քարտուղարի կողմից խախտվել է վերը նշված կարգով սահմանված պահանջները, ինչն և իր հերթին հանգեցնում է Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներոՎ սահմանված պահանջների խախտմանը: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշեց՝ «Արտավազդ Սարոյան» ԱՍ/Ձ-ի կողմից 18.04.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել»:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը խնդրել է «ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/26 բողոքը բավարարել նաև հաշվի առնել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/14 բողոքի վերաբերյալ կայացրած որոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 27.05.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 21.05.2019թ. գրությամբ «Օլանդա» ՍՊԸ-ի կողմից 16.05.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպված ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2018/8 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 02.05.2019թ-ի թիվ 2 նիստով որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ին 1-ին և 2-րդ չափաբաժինների, «ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ-ին 3-րդ, 4-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժինների, «Դամկար» ՍՊԸ-ին 5-րդ չափաբաժնի և «Ֆոտոն» ՍՊԸ-ին 7-րդ չափաբաժնի մասով: 03.05.2019թ-ին հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային գնումների armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով նշված նիստի արձանագրությունը ծանուցվել է առաջին տեղ զբաղեցրած բոլոր մասնակիցներին: Ծանուցված չորս մասնակիցներից երեքը օրենսդրությամբ սահմանված ժամկետում ներկայացրել են իրենց կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ բացի «ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ-ից, որն այն ներկայացրել է ժամկետից ուշ՝ 10.05.2019թ-ին, ուստի այն գնահատող հանձնաժողովի կողմից չի ուսումնասիրվել և 13.05.2019թ-ի թիվ 3 նիստով «ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 27.05.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/26 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2019/26 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Պատվիրատու կողմից Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2018/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Օլանդա» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2019թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի թիվ 3-րդ, 4-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժինների մասով «Օլանդա» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

3. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է ծանուցել *1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին և սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով հարցում կատարել ՀՀ ՊԵԿ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողների հաշվառման համարները:*

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 13.05.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է «Օլանդա» ՍՊԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ, որ «Օլանդա» ՍՊԸ-ն իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ուղարկել է սահմանված ժամկետից ուշ՝ 10.05.2019թ.:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Օլանդա» ՍՊԸ-ի 16.05.2019թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 21.05.2019թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած

մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից Պատվիրատուի կարիքների համար գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2018/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Օլանդա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2019թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի թիվ 3-րդ, 4-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժինների մասով «Օլանդա» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է *ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին և սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով հարցում կատարել ՀՀ ՊԵԿ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողների հաշվառման համարները:*

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 13.05.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է «Օլանդա» ՍՊԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ, որ «Օլանդա» ՍՊԸ-ն իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ուղարկել է սահմանված ժամկետից ուշ՝ 10.05.2019թ.:

Արձանագրում եմ, որ Բողոքաբերը ներկայացված բողոքով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հայտնել է, որ «ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2018/8» ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ-ին որևէ ծանուցում չի ուղարկվել հայտով ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերն ուղարկելու վերաբերյալ, այլ միայն ուղարկվել է նիստի թիվ 2 արձանագրությունը, որտեղ ևս որևէ նշում առկա չէ ապրանքների ամբողջական նկարագրերը ուղարկելու վերաբերյալ, սակայն 10.05.2019թ. Ընկերությունը սեփական նախաձեռնությամբ էլեկտրոնային տարբերակով ներկայացրել է փաստաթղթերը:

Միևնույն ժամանակ Պատվիրատուն ԳԲՔԱ-ՆԳ-2019/26 բողոքի շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին գրությամբ հայտնել է, որ 03.05.2019թ-ին հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային գնումների armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով «ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2018/8» ծածկագրով նիստի արձանագրությունը ծանուցվել է առաջին տեղ զբաղեցրած բոլոր մասնակիցներին, այդ թվում նաև՝ «Օլանդա» ՍՊԸ-ին:

Այսպիսով վերը նշված խնդրի կարգավորման նպատակով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 11.06.2019թ. գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն «ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2019/8» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Պատվիրատուի կողմից armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով «Օլանդա» ՍՊԸ-ին ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ: Ի պատասխան նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2019/8» ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Օլանդա» ՍՊԸ-ի armeps համակարգում գրանցված էլեկտրոնային փոստի հասցեով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 03.05.2019թ. ժամը 13:07-ին և 16.05.2019թ. ժամը 16:38-ին ուղարկվել են էլեկտրոնային ուղերձ-նամակներ:

Ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից գրությամբ տրամադրված ուղերձ-նամակներն արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2019/8» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Օլանդա» ՍՊԸ-ին՝ ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 03.05.2019թ. ժամը 13:07-ին ուղարկված Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության մեջ հստակ չի նշվել Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ, ուստի գտնում եմ, որ Ընկերությունը օբյեկտիվորեն չէր կարող ենթադրել, որ վերջինս պարտավորվում է ներկայացնել Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

Վերոգրյալով պայմանավորված արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջը, ուստի գտնում եմ, որ նման պայմաններում Ընկերության բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Միաժամանակ անդրադառնալով բողոքաբերի այն փաստարկներին, որ մյուս ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից քննվող բողոքում բարձրացված միևնույն փաստական և իրավական հիմքերով որոշում է կայացրել հօգուտ բողոքաբերի, ապա այս առումով հարկ եմ համարում նշել, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող մարմին է, որը շահագրգռված չէ կոնկրետ գնումների գործընթացի արդյունքներով և իր պարտականությունների ու իրավունքների կատարման ժամանակ պաշտպանված է արտաքին ազդեցություններից: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքներն ուսումնասիրում է պատշաճ մանրամասնությամբ և անաչառորեն: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքով նախատեսված լիազորություններն իրականացնելիս անկախ է գնման գործընթացի մասնակիցներից, այդ թվում՝ պատվիրատուներից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնյաներից և պարտավոր է ղեկավարվել բացառապես գնումների

մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կիրառել այն: Այսինքն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձանցից յուրաքանչյուրը Օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն հանդես է գալիս որպես անկախ քննություն իրականացնող մարմին և անկախ է գնման գործընթացի մասնակիցներից, այդ թվում՝ պատվիրատուներից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնյաներից և չի կարող կաշկանդված լինել Գնումների հետ կապված բողոքներ քննող մյուս անձի դիրքորոշումներով (որոշումներով), այլապես խոսք չի կարող լինել անկախ քննություն իրականացնող մարմնի մասին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Օլանդա» ՍՊԸ-ի կողմից 16.05.2019թ. ներկայացված բողոքը բավարարել. պարտավորեցնել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպված ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2019/8 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 13.05.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացրած «ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**